*426. Ս. ԳՐԻԳՈՐԻ արևմտյան մուտքի հյուսիսում, պատի մեջ ագուցված խաչքարի ճակատին, արտաքուստ, 1 տող.*

ԵՍՄՐԻՍՅՍԿՆԿՑԻԽՁՍԱԳՍԻ

ԵՍ ՏԻՐԱՑՍ Կ(Ա)ՆԳՆԵՑԻ Խ(Ա)Չ(Ս) ՍԱՐԳՍԻ.

Ծանոթ. *ՏՐԻՍՑՍ անսովոր անձնանուն է. եթե միայն ՏԻՐԱՑՈՒ անվան սխալմունք չի գրչի կողմից։*

Լալաեկ. 163

*427. Ս. ԳՐԻԳՈՐԻ արևմտյան մուտքի գլխին, արտաքուստ, ագուցված է եղել խաչքար հետևյալ արձանագրությամբ.*

Խաչս բարեխաւս տէր Եղիշա · · թվ. :ՋՀԳ: (1524)

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1886, թիվ Է, 441։ Ալիշան, 145։ МАК, 84—85 (միայն ռուսերեն թարգման. սխալմամբ կրկնված է Արտաեսի բաժնում, Անգ, էջ 88)։*

*428. ՎԱՆՔԻ ԲԱԿԻ արևելյան մասում եղել է տապանաքար*

ԱԷՐՈՎԲԷ եպիսկոպոսի անվամբ:

*Հրատ. Ջալալեանց, 156։*

## 24. ՑԱՂԱՑ ՔԱՐԻ ՎԱՆՔ

*Այս վանքի անունը հնագալում գրվել է նաև Ցախաց քար ձևով, բայց Ստ. Օրբելյանն իր չորս հիշատակումների մեջ գործ է ածել Ցաղաց քար ձևը (էջեր՝ 70, 340, 424, 481)։ Արձանագրությունների մեջ նույնպես հինգ անգամ Ցաղաց քար ձևով է գրված և մեկ անգամ Ցաղած քար, որը պարզապես գրչի սխալ պետք է համարել։*

*Գտնվում է այժմյան Եղեգիս (նախկին Էրդափին, հին՝ Արտաբույնք) և Ալայազ գյուղերից 6—7 կիլոմետր հեռավորություն ունեցող մի բարձրադիր սարավանդի վրա, որը շրջապատված է հիանալի արոտավայրերով և խոտհարքներով։*

*Հիշյալ երկու գյուղերից դեպի վանք տանող ճանապարհները միանում են մի նեղ ձորակում. ճանապարհը ոլորապտույտ կածան է, քարքարոտ, վերամբարձ և խիստ դժվարին։*

*Վանքի շինությունները բաղկացած են երկու գլխավոր խմբերից, որոնք իրարից հեռու են մոտ 200 մետր։*

Ա. խումբ *(արևմտյան). շրջափակված է ընդարձակ պարսպափակ բակով, որի արևելյան պարսպին կից, մի շարքի վրա, կանգնած են երկու եկեղեցի, մի մատուռ և երկու գավթանման շենքեր։ Խմբի հարավային կողմի եկեղեցին կոչվում է ս. Հովհաննես, սա մի թաղածածկ, երկարավուն շենք է. պատերին արձանագրություններ չունի, արևելյան պատի վրա, արտաքուստ, մի քարի վրա կա ։ՆԼԸ։ (989 թ) թվականը, իսկ մուտքի բարավորի վրա նվիրատվական արձանագրություն ։ՈԿ։ (1211) թվականից։*

*Երկրորդ եկեղեցին գտնվում է շարքի հյուսիսային կողմում, որը կենտրոնագմբեթ շենք է, գրեթե կանգուն. պատերին ոչ մի արձանագրություն չունի։*

*Հյուսիսային պարսպին կից մնում են հինգ սենյականման թաղակապ շենքերի կիսավեր մնացորդները, իսկ բակի զանազան մասերում անտեսական այլ շենքերի մնացորդները և ձիթհանի ավերակները։*

*Այս խմբի երկու մուտքերը եղել են արևելքից և արևմուտքից, կարևոր է արևելյանը, որը շենքերի արանքով ձևավորված թաղակապ, երկարավուն միջանցք է՝ սրբատաշ քարերով.*

նույնպես մշակված է և լայն դարպասը։ Այս միջանցքի ներսումն են գտնվում արձանագրությունների մեծ մասը, սակայն արձանագրություններից երևում է, որ այս միջանցքը կառուցվել է ավելի ուշ, քան եկեղեցիները։

Այս առաջին խմբի շինությունները հնագույն են Ցաղաց քարում. Ասողիկի հաղորդման համաձայն՝ շինված են Աբաս Բագրատունու օրոք, X դարի կեսերին՝ ոմն Ստեփանոսի ձեռքով, որը, հավանաբար, եղել է վանքի առաջին առաջնորդը։ Այստեղ հնագույն արձանագրությունը 980 թվականից է, որը մոտ է պատմագրի նշածին։

Հուշարձանների այս խմբի բոլոր շենքերը կառուցված են կոփածո և կիսատաշ քարերով, բացի միջանցքից։ Եկեղեցական շինությունները կանգուն են, ծածկերի մասերը որոշ տեղեր փլած։

Բ խումբ (արևելյան). գլխավոր եկեղեցին կոչվում է ս. Կարապետ, որը կենտրոնագմբեթ է՝ շինված մաքուր, սրբատաշ և մեծ քարերով։ Սա Վայոց ձորի լավագույն ճարտարապետական կառույցվածքներից մեկն է. մուտքը, պատուհանները և այլ ակնառու մասերը ձևավորված են ինքնատիպ և ճաշակավոր զարդերով։ Հարավային պատին եղել է թևատարած արծվի բարձրաքանդակ, որը ճանկերով բռնել է խոյին (այժմ ընկած է), իսկ հյուսիսային պատին (նույնպես արտաքուստ)՝ առյուծը առաջին երկու ոտքերով բռնել է ցուլի կամ եզան թիկունքից։

Այս խմբի երկրորդ եկեղեցին գտնվում է ս. Կարապետի հարավում, քսան քայլ հեռու։ Սա կիսագետնափոր և երկհարկանի շենք է, որի առաջին հարկում եղել է մի փոքրիկ եկեղեցի և գավիթ, սրանց վրա՝ փոքրիկ մատուռ, որն այժմ փլած է։ Առաջին և երկրորդ հարկերի բաժանման մասը ձևավորված է որպես պատվանդան, որի ծայրերին կանգնած են երկու շատ մեծ ու գեղաքանդակ խաչքարեր, որոնց արանքում կառուցված է մի լայն խորշ՝ վերին մասը կրկնակի կամարներով ձևավորված։

Երկրորդ խմբի բոլոր հուշարձանները կառուցվել են միաժամանակ, Հայր Վարդիկի կողմից, որի անունը պահպանվել է մի քանի արձանագրությունների մեջ։ Ս. Օրբելյանը օգտվել է այդ արձանագրություններից և շինության ժամանակը նշանակել 1041 թվականը։

Վանքի այս երկրորդ խմբի բոլոր շենքերը շինված են հավասար կերպով սրբատաշ և մեծամեծ քարերով, խնամքով ու ճաշակով։ Այս հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ շինությունը հովանավորված է եղել որևէ աշխարհիկ իշխանի կողմից, մանավանդ որ ինչպես տեսանք, ս. Կարապետի երկու պատերին կան իշխանական զինանշանի տիպի բարձրաքանդակներ։

Նկատի առնելով շինության ժամանակը՝ XI դարի առաջին կեսը, պետք է ենթադրել, որ այդ շինություններին հովանավորել է Սյունյաց Վասակյան իշխաններից մեկը, որոնց նստոցը եղել է հարևան Եղեգիս ավանը, իսկ գլխավոր բերդը՝ Սմբատաբերդը՝ Եղեգիսի և Ցաղաց քարի արանքում։ Նշենք նաև, որ Սմբատաբերդ տանող ջրի հետքը, որը մենք ստուգել ենք մեծ տարածության վրա, կավե խողովակներով հասցնում է վանքի մոտերքում բխող աղբյուրներին։

Եղեգիս ավանը, Սմբատաբերդը և Ցաղաց քարի վանքը նախքան Օրբելյան տոհմի տիրապետության շրջանը, կազմել են ճարտարապետական, հոգևոր ու քաղաքական մի ամբողջություն և Վասակյան տոհմի կենտրոն Վայոց ձորում։

Ժողովածուն այս վանքից պարունակում է 34 արձանագրություն, որոնցից նախորդ հրատարակություններում կան միայն 15-ը, իսկ 19-ը հրատարակվում են առաջին անգամ։

## Ա. ԽՈՒՄԲ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

**429. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ** *արևելյան պատին, արտաքուստ, միայն թվական.*



ԹՎ. ։ՆԼԲ։

Լասանց. 164

**430.** *Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ գավթի արևմտյան պատին, արտաքուստ, 4 տող.*



ԳՐԻԳՈՐ| ՔԱՀԱ՛Ն|Ա.Ց ՅԻՇԵՑ|Ի՛Ք Ի Ք͞Ս:

Լուսանկ. 165

**431.** *Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ գավթի արևմտյան պատի տակ կանգնած խաչքարի շրջանակներին.*



ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ԲԱՐ⌈Ե⌉Խ⌈ԱՒ⌉ՍՈՒԹԻ.

ԳՐԻԳ⌊Ո⌋Ր ⌊ՔԱ⌋ՀԱՆԱՑԻ ԹՎ. :Ո: (1151):

Ծանոթ. *Այս խաչքարը կանգնած է նախորդ արձանագրության կողքին. համարում ենք նույն Գրիգորի հիշատակությունը. ժամանակը նույնն է։*

**432.** *Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ արևմտյան մուտքի բարավորի վրա, արտաքուստ, 8 տող.*



Թ͞Վ. :ՈԿ: ԵՍ ԳՐԻԳ|ՈՐ, ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱ, ՈՍ⌊Տ⌋ՆԻ ՏԷՐ, ՁԵՐԿՈՒ ԴՌՆԻՍ Տ|ՆԿԵՑԻ ԵՏՈՒ Ի Ս͞Բ. ՅՈՎԱՆԷ|Ս. ԳՐԵՑԱՒ Ի ՏԱՐԻՆ :ԺԲ: ԱՒ⌊Ր⌋ ԺԱ⌈Մ⌉. Ո⌉Ր ԳՐՈՑՍ ՀԱԿԱՌ|ԱԿ⌈Ս :ՑԺՐ⌉: ՀԱՑՐԱ⌈ՊԵ⌉Տ|ԻՑ ⌈ՆԶՈՎԵԱԼ⌉ ԵՂԻ⌈ՑԻ⌉:

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ Ե, 305։*
*Ալիշան, 156։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 25։*
Լուսանկ. 166

**433. ԽԱՉՔԱՐԻ** *վերին մաս, գեղաքանդակ, սպիտակավուն քարից, ընկած է բակի հյուսիսային խուցերից մեկի մեջ. կողքերի շրջանակներին.*



ԹՎ. ՈԿԴ: (1215) ԿԱՆԳՆԵՑԱՒ
ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ.
ԱՒՐՀՆԵԼ Կ . . . :

**434. ՄԻՋԱՆՑՔԻ** *արևելյան մուտքի շրջանակի վերին նեղ քիվին, 2 տող.*



ԹՎ. ՈՀԱ: (1222) ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍԲ. ԱԾԱԾԻՆՍ Ի ՁԵՌՆ ԳՐԻԳՈՐՈՅ. ԵՒ
ՍԲ. ՀԱՐՔ[Ս] ԳՐԵՑԻՆ ԻՒՐ ՏԱՒՆԻՍ :Ա: ԺԱՄ. ԿԱՏԱՐԻՉ[Ք] Հ[Ր]ԱՄԱՆ[Ա]ՑՍ
ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

*Հրատ. Ջալալեանց, 162։ Ալիշան, 156։* MAK, *111։*
*Լալաեան, Ազգ. հանդ.* XXVI, *25։*

**435. ՄԻՋԱՆՑՔԻ** *հյուսիսային պատին, ներքուստ, 10 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԷԱՉԻ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ, ԹՈՌՆ ՊՌՈ[ՇԱՅ] ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ.
ՈՒԽՏԻՍ ՑԱՂԱԾ ՔԱՐՈ,[ ԵՒ ԵՏՈՒ ՑԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՅ Ի ՍՐԿՂՈՒՆՍ ՁՄԵՐ]
ՁԵՌԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆ ՆՈՐԱԿԵՐՏ ԻՒՐ ՋՐՈՎՆ.[ ՄԵՐ ԵՂԲԱՅՐՆ ՏՐ. ԱԻՐՊԷԼԻ
ՈՂԱՆԷՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՆ [Ի ՏԱՐԻՆ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Դ: ՊԱՏԱՐԱԳ ՍԵԶ ԵՒ]
ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅՆ ԻՄՈՅ [ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ՝ Ի ՏԱՒՆԻ ԴԱՒԹԻ
ԵՒ ՅԱԿՈԲԱ. [ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ. [Ի ԹՎ. ՉԿՁ: (1317):

*Հրատ. Ջալալեանց, 162։ Ալիշան, 156։* MAK, *111—112։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 25։ Հովսեփյան, Խաղբակյանք, Ա. էջ 4։*
Լուսաեկ. 167

**436. ԲԱԿԻ** *հյուսիսային կիսավեր խցերից կենտրոնականի պատին, 4 տող.*



ԹՎ. :ՈՂԴ: (1245) |ՄԱՆՈՒԿԻՍ| ԽԱՉՍ ՅԱՂԱԻ|ԹՍ ՅԻՇԵՔ:

Ծանոթ. *Արձանագրությունից վեր քանդակված է խաչ:*

**437. ՄԻՋԱՆՑՔԻ** *հարավային պատին, ներքուստ, 3 տող.*



Ի ԹՎԻՆ :ՉԿԶ: (1317) ԿԱՄԱԻՆ ԱՅ. ԵՍ ԳՐԱՐԻԿ ՄԻՍԱՔԱՆԵՑԱ ՍՔ. ՈՒԽՏԻՍ ՑԱՂԱԾ ՔԱՐՈ ԵԻ ԵՏՈՒ Ի ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ| ԻՄՈՑ . . . ԱՑԳՈՑՆ

Ծանոթ. *Հրատարակիչները անձնանունը ԳՐԱՄԻԿ են վերծանել, բայց Մ և Ր տառերի վերին կորությունները որոշակի տարբեր են (տե՛ս գծագրությունը):*

*Արձանագրության սկզբից դրված թվականը տեղում չենք տեսել և անհարմարության պատճառով հնարավոր չի եղել լուսանկարել. լրացնում ենք ըստ հրատարակիչների, որը, սակայն, կասկածելի է:*

*Վերջի տողը փակագրերով է և ջարդոտված, մնում է անվերծանելի:*

*Հրատ. Ջալալեանց, 163. Ալիշան, 156. Լալայան, Ազգ. Հանդ. XXVI, 26.* МАК, *112.*

**438. ՄԻՋԱՆՑՔԻ** *հյուսիսային պատին, նախորդից արևելք, ներքուստ 11 տող.*



ԿԱՄԱԻՆ ԱՅ. ԻՇԽԱՆՈՒԹԲ. ԻԻԱՆԷԻ, ՀԱՅՐԱՊԵՏ|ՈՒԹԲ. ՏՐ. ՆԵՐՍԵՍԻ. ԵՍ ԼԻԱՆՈՍ, ՈՐԴԻ ՍԱՄՍՈՆԱՅ, ԱՄՈՒՍԻՆ| ԻՄ ԱՐՁՈՒ ԽԱԹՈՒՆՍ ԹԱՂԵՑԱՔ ՍԵՐ ՍԱՄՍՈՆ, ՈՐԴԻՍ Ի ՎԱ|ՆՔՍ. ՄԵՔ ԷԼ ԳԵՐԵԶՄԱՆ ՀԱՍՏԱՔ, ՄԱՏԱՂ.

ԱՐԱՐԱՔ ԵՒ ԵՂՔ ՄԵՐ ԱՌ ՔՍ. Ի ՀՐԵՇՏԱԿԱԲՆԱԿ ՍԲ. ՈՒԽՏՍ ՑԱՂԱՆ ՔԱՐ. ՄԵԾ| ՊԱՐՈՆԱՑ ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐՏԱԲԻՆԵՑԻՔ ՄՈՒԽԻ ԱՐԾԱԽԵՑ|ԻՆ ԱՄԷՆ ՀԱՐԿԷ ԱԶԱՏ, ՍԻՐԿԱՆՑ ԱՑԳԻՆ ԳԻՆՆ ԲՈՒՐՂԱ ԹՈՒՐՔԻՆ ՊԱՐՏՔՆ ՏՎԻՆ, ԳԵՂ|Ո ՏՂԷՔՆ ԳԵՐԻ ԹԱՓԵՑԻՆ. ԱՑԳԻՍ ԶԱՐԷՔՆ ԻՄ ԵՂԲԱՒՐՆ ՏՎԱՔ ։Գ։ ԶԱՐԷՔՍ՝ ։Ա։ ԻՄ ՀՈԳՈՑՍ, ։Ա։ ԱՐՈՒ|Զ ԽԱԹՈՒՆԻՆ Հ͵ՈԳՈՑՆ͵, ։Ա։ ՍԱՄՍՈՆԱ Հ͵Ո͵Գ͵ՈՑՆ͵՝ ՏՎԱՔ Ի ՍԲ. ՀՈՎԱՆԷՍ ՎԱՍՆ ԾՈՎԱՑԵԼ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ. ՍՊԱՍ ԱՒՈՐ ՆԵՐՍԷՍ ԵՒ ԱՑԼ ՄԻԱԲԱՆՔՍ ՏԱՐԻՆ ։Զ։ Պ͵ԱՏԱՐԱ͵Գ ՏՎԻՆ ՄԵԶ, ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ. ՈՎ ՀԱԿԱՌԱԿԻ Գ|ԱՏԻ ԱՑ, ՄԱՍՆ ԲԱԺԻՆ ՈՒԳԱԻՆ ԵՒ ԱՑ|͵ ԽԱՉԱՀԱՆԱՑՆ ԱՌՑԷ.

ԹՎ. ։ՊԺԶ։ (1367)։

*Ծանոթ. Գրված է անսովոր փակագրերով, որոնք հրատարակիչների մոտ մնացել են առանց վերծանման։*

*Հրատ. Ջալալեանց, 161—162։ Ալիշան, 156—157։*
*ՄАК, 112։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 25։*
*Լուսանկ. 168*

***439. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱՎԹԻ մեջ, տապանաքարի վրա.***

Զազնիւն, յնտրեալսն և զքաջն ի զաւրականոն զպարոն Ռւքանն յիշեցէք.
թվին ։ՉՀԵ։ (1326)

*Ծանոթ. Այժմ ծածկված է փլատակներով, ստուգելու հնարավորություն չենք ունեցել։*

*Հրատ. Ջալալեանց, 162։ Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ Ե, 304։ Ալիշան, 156։*

***440. ԱՐԵՎԵԼՑԱՆ ՊԱՐՍՊԻ վրա, միջանցքի դարբասի մոտ, արտաքուստ, 6 տող.***



ՑԱՆՈՒՆ ԱՑ. ԵՍ ՎԱՐԳԱՆ ՄԻԱԲԱՆ|ԵՑԱ Ի ՍԲ. ՈՒԽՏՍ ԵՒ ԵՏՈՒ ԶԻՄ ՏԵՐՈՒՆ͵ԱԿԱՆ͵ |ՍԲ. ՆՇԱՆՆ ԵՒ ԳՐԱԿԱԼՔ. ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ։Բ։ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի Տ|ԱՒՆԻ ՍԲ. ԳԷՈՐԳԻՆ. ԿԱՏԱՐԻԶՔՆ ԱԻ͵Ր͵ՀՆ|ԻՆ ՑԱՑ. ԵՒ ԽԱՓԱՆԻԶՔՆ ԳԱՏԻՆ

*Ծանոթ. ՎԱՐԳԱՆ թերևս պիտի ՎԱՐԴԱՆ լինի. թողնում ենք ըստ գրչության։*
*Լուսանկ. 169*

*441. ԲԱՆԻ հյուսիսային մասի կիսավեր խցերից մեկի պատին, 4 տող.*

ԽԱՉԻԿԿՐԱԻՆԱԻՈՐԻՀԱԼԱԼ
ԸՍՏԱՅԻԻԱԾՈՅԻԻՐԸՍՏԱՅԱԻ
ՁԵԿԵՂԻՍԵԻԳՐԵՅԱՔԻՏԱՐ
ԻՆ:Ա:ԺԱՄ

ԽԱՉԻԿ ԿՐԱԻՆԱԻՈՐ Ի ՀԱ-
ԼԱԼ| ԸՍՏԱՑՈՒԱԾՈՑ ԻՒՐ
ԸՍՏԱՑԱԻ| ՁԵԿԵՂ,ԵՑյԻՍ ԵՒ
ԳՐԵՑԱՔ Ի ՏԱՐ|ԻՆ :Ա: ԺԱՄ:

*Ծանոթ. Գրված է անարվեստ և խոշոր տառերով։*

*442. ՑԱՂԱՑ ՔԱՐԻ վանքից դեպի Սմբատաբերդ տանող ճանապարհին, ավերակների մեջ կանգնած խաչքարի վրա.*

Թվ. :ՁԼԷ: (1288) Սարգիս քահանայ կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն և յիշատակ ննջեցելոց մերոց, որք յիշէք՝ ողորմեցի Քրիստոս.

*Ծանոթ. Գտնվելիս է եղել Բերդասարի լանջին, այժմ չկա։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, Բիվ Ե, 309։*

Բ. ԽՈՒՄԲ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

*443. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ հարավային մուտքի շրջանակի վերին քիվին, արտաքուստ, 1 տող.*

ՏՐԱՔՈՂՈՐՄԵԱՅԳԱԳԿԱՅԻՔՈՒՄԳԱԼԸՍՏԵԱՆԴԻՒՊԱՀԵԱՁԱՐԷ

ՏՐ. ԱԾ. ՈՂՈՐՄԵԱՑ ԳԱԳԿԱՑ Ի ՔՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆԴ ԵՒ ՊԱՀԵԱ Ի ՉԱՐԷ։

*Ծանոթ. Հիշված Գագիկն, անշուշտ, Բ-ն է, հետևաբար արձանագրությունը գրված է նրա թագավորության տարիներին՝ 1043—1044 թվականներին։*

*Հրատ. Ջալալեանց, 161։ Ալիշան, 152։ Քաջբերունի, Արարատ, 1888, Բիվ Ե, 300։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 23։*
Լուսանկ. 170

*444. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ հարավային մուտքի բարավորի վրա, արտաքուստ 4 տող.*



ՈՂՈՐՄԵԱՑ ՔՍ. ԱԾ. ՎԱՐԴԿԱՑ Ի ՔՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆԴ, ՈՐՊԵՍ ԱԻԱԶԱԿԻՆ Ի ԽԱՉԻՆ ԵՒ| ՄԱՔՍԱԻՈՐԻՆ Ի ՏԱՃԱՐԻՆ: ԵՍ ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ ՍՏԱՑԱՑ ՋՍԲ. ԿԱՐԱՊԵՏՍ.| ԱՐԴ ՈՐ ՍԲ. ՍԱՐԳԻՍՆ ԱԻՐ ՑԱՑՍ :Ե: ԵԿԵՂԵՑՈՒՄՍ ԺԱՄ ՎԱՐԴԿԱ ՏԱՌՆ|Է ՍԲ. ԿԱՐԱՊԵՏԵՍ ԵՂԻՑԻ ՆԶՈՎԵԱԼ, ԻՍԿ ԱՌՆԵԼԻՆ ԱԻ|Ր|ՀՆԱԾ Է ՑԱՑ:

*Ծանոթ. Դրել է Նախորդի գրիչը. պատմական տեղեկություններով հաստատվում է, որ ժամանակակից է Նախորդին։*

*Հրատ. Ջալալեանց, 161։ Ալիշան, 152—154։* ՄԱԿ, *106։ Լալա. եան, Ազգ. Հանդ. XXVI, 23։* Լուսանկ. 170ա

**445.** *Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ներսում, հյուսիս-արևելյան խորանի մուտքից վեր քանդակված խաչերի տակին, 3 տող.*

ՄՐԱԾԻՋԵՌՆՍԲ
ԿԱՐԱՅՊԵՄԻՍՈՂ
ՈՐՄԵԱՎԱՐԴԿԱ

ՏՐ. ԱԾ. Ի ՁԵՌՆ ՍԲ.| ԿԱՐԱՊԵՏԻՍ
ՈՂ|ՈՐՄԵԱ ՎԱՐԴԿԱ։

**446.** *Ս. ԿԱՐԱՊԵՏԻ հյուսիս-արևմայան խորանի հարավային պատի վրա, 17 տող.*

ՇՆՈՐՀԻՒՆԱՅԸՍՄ ········· Յ ······ ՈԲ ·········
ՈՑԵՒԸՍՄԱՌԱՀՆՈ ············ ՆԱՅ: ՇՈ ·········
ԻՍՀԱՅՈՑ ԵՍՀԱՐԲՈՆԳԱԲ ········· ԵՐՈ ·········
ԿԱԳՆԵՑԻՁՍԲ ··· ԵՒՁՄՈՐ ··· ԵՄՈՒԻՄԱ ···········
ՔԻՍՑԱՂԱՑՓԱՐԻ ··········· ՀԱՅՐՎԱՐԴ ·········
ԱԻՈՐ ՈՒԹԵԱՄԲԵՒՍԲԵՂԲԱՐԱՅՍԵՒԱՐԱՐԻՄ ·········
ԽԻՄԵՂՈՒ ··· ՀՈԳՈՅՍ Ս ՄՈԵՒ ԱՌԱԾ ՎԱՍՆ ·······
ՎՈՎ ·· Յ ···· ՈՒԹԵՆԵՒՍՈՔԱՅ ················
ԲԱՒԱ, Ա ································
ՄԻՆՁՊԱՄԱՐԱԳՆԻՆ ·························
ԻՄԵՒՅԵՄԵԼԻՑԻՄՈՅ ······ ՀԵԱԻՆՉԱՐԱ· ԵՆ ·······
Ք ԱՅՍԳՐՈՅՍՀԱԿԱՌԿԱ ԿԱՄԻՅԱՒԱԳԱՅԿԱ ··· Ե ·····
ՂԲԱՐԱՑԿԱՄԻՀԱՅՐԱՊԵՄԱՑՈՐՔԱՌԱՅՀՈՐԴ ········
ՀԱՅՐՎԱՐԴԿԱԻՄՄԵՂԱՑՆՆԱՄԱՅԵՀԱՄԱՐՅԱ ····
ԻՐՆԴԱՄԱՍՄԱՆԻՆԵՒՅԺԸՀԱՅՐԱՊԵՄԱՑՆԸՆԴԿԱՊԱ
ՆԱՒՓԵՂԻՑԻԵՒՄԱՍՆԸԴՅՈՒԴԱԻԵՂԻՑԻ· ·ԱՄԱՐԻՉ
·Ք՛Ն ԱՒՐՀՆԵԱԼԵՂԻՑԻ՛Ն

*Ծանոթ. Այս արժեքավոր արձանագրության սկզբի տողերը, որոնք տալիս են հիմնական իմաստը՝ հողմնահարված-թափված են. այդ պատճառով էլ բովանդակությունը վերականգնելն անհնարին է։ Վերջին տողերը համեմատաբար լավ են պահպանվել, բայց անտեղ օրհնության և անեծքի սովորական բանաձև է միայն։*

*Հավանական է, որ շատ վաղուց արձանագրությունն այս տեսքն է ունեցել, քանի որ*

նախորդ հրատարակիչները չեն արտագրել։ Նկատի ունենալով մնացած մասերում պահպանված բառերի և մանավանդ անձնանունների արժեքը՝ տալիս ենք գծագրությունը միայն։

Հայր Վարդկա անվան գոյությունն ապացույց է, որ գրված է նախորդներին մոտ ժամանակ։

Լուսանկ. 171

**447. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ** *ներսում, հարավ-արևելյան խորանի մուտքից վեր քանդակված խաչերի տակին, 4 տող.*



ՏՐ. ԱԾ. Ի ՁԵՌՆ ՆՇԱՆԻ[Ս] . . . .
ՁԻՆ ՈՂՈՐՄԵԱ. . . . . . . ԳՐԳԱՑ
. . . . ԵԱ.

**448. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ** *հյուսիսային պատին, ներքուստ, խիստ հողմնահարված, 8 տող.*



. . . . . Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹ[ԵԱՆ
ՎՐԱՑ ԹԱՄԱՐԻՆ ԵՒ] ՄԵԾ ԻՇԽԱՆԻՆ ԶԱ[ՔԱՐԷԻ] . . . . .
. . ԱԹՈՌ ՆԱՇ ԱՑԳԻ ԵՂԵԳԵՑ ԳԱՒ[ԱՌ] . . . ԷԻ ՏԱՆԵՆ
. . . ԱՆԷՔ . . . [ՄՔ] ՈՒԽՏԻՍ ՑԱ[Ղ]ԱՑ ՔԱՐԻ] . . . ԿԱՏԱՐԻ]ՁՔ ՀՐԱՄԱՆ[ԻՍ ԱԻՐՀՆԻՆ ՑԱՑ

**449. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ** *արևմտյան պատին, ներքուստ, 1 տող.*

թվին :ՈՀԹ: (1230) յիշէցէք ի Քս:

Ծանոթ. *Այս արձանագրությունը տեղում չենք նկատել, ենթադրում ենք, որ հրատարակիչը շփոթմամբ է հիշատակում։*

Հրատ. Ղալաևան, Ազգ. ջանք. XXVI, 23։

**450. Ս. ԿԱՐՂՊԵՏԻ** *հարավային մուտքի շրջանակի վերին մասի կենտրոնում և արևելյան կողի վրա, 5 տող.*



[ԿԱՄԱՒՆ] ԱՑ. ԵՍ ԱՍՓԱՑ[Ս ԱՄՈՒՍԻՆ ԼԻՊԱՐԻՏ ԻՇԽԱՆԻ ՏԻ]ՎԻ ՑԱՐՏԵՐՈՑՆ ՁՄԵԾ ԱՐՏ ԻԻՐ Ս[ԱՀՄԱՆԱՒՔ]Ն Ի ՍՔ. ՑՈՎ[ԱՆԷՍ ՈՐ ԻՄ] ՀԱ[Ց]ՐԵՆԻՔ ԷՐ Ի

ՀՆՈ⌈Ւ8 ԵՒ ՍՈՔԱ⌉ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ · · ⌈ԱՒՐ ԺԱՄ. ՈՐ⌉ ՀԱԿԱՌԱԿԱ՝ ՑԻՄՈՑ ԿԱՄ| ՑԱՒՏԱՐԱՑ, ՄԱՍՆ ՈՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ՑՈՒԴԱՒ ԵՂԻՑԻ·| Ա̅ԾԱԾԻՆ ՏՈՒՆԻՆ ԺԱՄ ԱՍՓԻՆ ԱՌՆԵՆ.

*Ծանոթ. Վերջին տողում ԺԱՄ ԱԱՓԻՆ համարում ենք կասկածելի։*

*Արձանագրության ճիշտ ժամանակը որոշել դժվար է. եղել են երկու Ասփա Օրբելյաններ, մեկը՝ Լիպարիտ իշխանաց իշխանի ամուսինը, մահացած 1263 թ. և երկրորդը՝ Տարսայիճի դուստրը՝ մահացած 1311 թ.։ Այս դեպքում հավանական ենք համարում առաջինի հիշատակությունը, որովհետև արձանագրությունը գտնվում է երկու հնագույնների արանքում, № 1—2։ Վերջին երկու տողը գրված է մուտքի արևելյան կողի վրա՝ վերից վար։*

Լուսանկ. 172

***451. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ հարավային պատին, մուտքից վեր, ներքուստ. 15 տող.***



Թ⌊ՎԻՆ⌋ :Չ

ԱՑՍ ԳԻՐ ՃՇՄԱՐԻՏ ՑՈՒՍՈՑ ⌊Ց⌋ԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԱՆՋՆՋ|ԵԼԻ ⌈ԱՌԱՋՆ ՏԵՂ.Ի⌉ ՏԱՐՍԱՒՃԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ, ՈՐԴԻ ՄԵԾ|Ի ԼԻՊԱՐՏԻ, ԵՂԲԱՑՐ ՍՄՊԱՏԱ ԱՐՔԱՒ, ԿՈՂՄՆԱԿԱԼԻ ԱՑՍՄ ՆԱՀԱՆԳԻ, ՈՐ ԻՇԽԵՑՈՂ ԷԻ ԲԱՐԳՈՒ|ՇԱՏԱ ՄԻՆՉ ⌈ՑԳԱՌ⌉ՆԻ. ՍԱՀՄԱՆՔՍ ՄԵՐ ԵՐԱՍԽ. ՄԵ|Ր ՑՈՒՍ ·Ք̅Ս̅ Է. Զ⌈ԲԱԺԻՆ⌉ ՀՈԳՈՑ ՄԵՐՈՑ ՏՎԱՔ Ի ՍԲ. ՈՒԽՏ|Ս ՑԱՂԱՑ ՔԱՐՈ⌈Ց Ի ՀԱՑ⌉ՐԵՆԵՑՆ ՄԵՐՈՑ, Ի ԳԵՂԱՐՔՈՒՆԻ |ՋԳԵՂՆ ԳԱՌՆՈ · · · ԵՒ Ի ՄՃԸՌԿԱՋՈՐ ՋՄԵՐ ՋԵՌԱ|ՏՈՒՆԿ ԱՑԳԻՆ Ա · · · ՈՒԹԵՑ ՍՊԱՍՔ. Տ̅Ր. Գ⌊ՐԻԳՈ⌋Ր, ԱՑԼ ՄԻԱԲ|ԱՆՔ ՍԱՀՄԱՆԵՑ⌊ԻՆ⌋ ՋԱՏԿԻ ՍԲ. ՏԱՒՆ

ԱՌԱՔԵԼՈՑ ՊԵՏՐՈՍԻ ԿԱԹ|ՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԱՄԵՆԱՑՆ ՊԱՏԱՐԱԳՆ :Ա: ԱԻՈՒՐՆ ԻՆՋ ԱՌՆԵՆ| ՏԱՐՍԱԻՃԻՍ. :Ա: ԱԻՈՒՐՆ ԱՄՈՒՍՆՈՑ ԻՄ ՄԻՆԱ ԽԱ-ԹՈՒՆԻՆ. ԱՐԳ՝ ԹԷ ՄԵՐՈՑ ԿԱՄ ՑԱԻՏԱՐԱՑ ԿԱՄ ԻՇԽԱՆԱՑ ՀԱԿԱՌԱԿԱ :ԳՃԺԸ: ՀԱՐԱՊԵՏԱՑ ՆԶՈՎ.ԱԾ Է:

*Ծանոթ. Հավանաբար գրիչը թվականի մեջ բաց է թողել տասնավորն ու միավորը։ Տարսայիճը մեծ իշխան և հետևաբար արձանագրության մեջ նշված սահմանների տեր դարձավ իր եղբոր՝ Սմբատի մահից հետո, 1273 թ. և այդ ժամանակից հետո միայն կարող էր այս բովանդակությամբ արձանագրություն թողնել։*

*Երրորդ տողում «առաջին տեղի» լրացնում ենք ըստ նախկին հրատարակիչների, որը, սակայն, կասկածելի է, իրականում այդ մասը ջարդված է։*

*Տասներկուերորդ տողում ԱՄԵՆԱՑՆ գրված է նշանագրով, որ հազվադեպ է արձանագրություններին մեջ։ Ձեռքի տակ ունենք լուսանկարը, բայց տեղի մթության պատճառով խավար է։*

*Հրատ. Ջալալեանց, 161։ Ալիշան, 154։* MAK, *107—108։ Ստ. Օրբելեան (բովանդակությունը), 424—425։ Լալաեան, Ազգ. Հանդ. XXVI, 23—24։*

**452. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ** *հարավային պատի արևելյան խորշի շրթունքին, արտաքուստ, 2 տող.*



ԵՍ ԱՆՏՈՆ ՄԻԱՑՆ[ԱԿ]Ե[Ա]Ց ՁԻՄ [Մ]ԱՍՈՒՆՔՍ . . .

*Ծանոթ. Չի շարունակված։*

Լուսանկ. 173

**453. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ** *արևելյան պատի ստորին մասում, արտաքուստ, 6 տող.*



ԵՍ ԱՂԱՄՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ[Ի]Ց ՍԲ. ՈՒԽՏ[Ի]Ս ԸՆՁԱԻՒՔ. ՏՐ. ՍԻՒՆԵՑ ԵՊ[Ի]ՍԿՈՊ[Ո]ՍՍ ԱԻՐՊԷԼ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ[Ի]Ս ԵՏՈՒՆ[Ե] :Ա: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒ[Ի]ՆԻՆ ՍԲ[Ո]. ՅԱԿՈԲԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔ[Ի]Ն ԱԻՐՀՆԻՆ ՑԱՑ[Ե] Ի ԹՎ. . . .

*Ծանոթ. Եպիսկոպոս ԱԻՐՊԷԼՆ անշուշտ Հովհաննեսն է։ Այսպես է ստորագրել նա իր շինած Արփա գյուղի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ. հաջորդել է պատմագիր Ստ. Օրբելյանին. դահակալել է 1304—1324 թթ., հետևաբար այս արձանագրությունը գրված պետք է լինի* XIV *դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում։*

Լուսանկ. 174

**454. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *գանվում է Ս. Կարապետի արևելյան պատին մոտ, վրան 1 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՂԱԽՆՈՅՆ ԱԼԱՄԱ.

*Ծանոթ. Նախորդ արձանագրության մեջ հիշատակված անձնավորությունն է և ժամանակով մոտ նրան։ Գծագիրն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*

**455.** *Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ գավթի արևմտյան պատի հարկաբաժան ելուստի վրա, ամբողջ պատի երկայնությամբ, արտաքուստ, 5 տող.*



ԵՍ ՀԱՅՐ ՎԱՐԴԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ. ՈՒԽՏԻՍ ՑԱՂԱՑ ՔԱՐԻ ՇԻՆԵՑԻ ԶՍԲ. ԿԱԹԱՂԻԿԷՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՆՇԱՆ ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ Վ.Ե|ՄՆ ԻՄ ՀԱԳՈՅՍ ՓՐԿՈՒԹԵԱՆ, ԹԵ[Ե]ՐԵՒՍ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԳՏԻՑ Ի ՅԱՊԱԳԱՒՆ Ի Տ.Ի.ԵԶԵՐԱ-ԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ, ՈՒՐ ԲԱՆՔՆ ԸՍՊԱ|ՌԻՆ ԵՒ ԳՈՐԾՔՆ ԹԱԳԱՒՈՐԵՆ։ ԱՐԴ ՈՎ ՍԲԱԶԱՐԴ ՔԱՀԱՆԱՅՔ, ՈՐՔ ԶՍԲ. ՊԱՏԱՐԱԳՆ ՀԱՄԱՐՁԱԿ ՄԱՏՈՒՑԱՆԵՔ. ԶԻՍ| ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ ԱՌԱՋԻ ԶԵՆԼՈՅՆ ՔՍԻ, ԵՒ ՔԱՆԻ Ի ՔՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱ... Է ԱՄԷՆ ՇԱԲԱԹՆ ԱԻՐ ԶԺԱՄՆ ԻՆՁ ԱՌՆԷ Ա|ՅՆ ՔԱՀԱՆԱՅՆ, ՈՐ Ի ՍՄԱ ՊԱՏԱՐԱԳՆ ՄԱՏՈՒՑԱՆԷ։

Ծանոթ. *Ս. Օրբելյանը հաղորդում է, որ հայր Վարդկա կողմից այս կառուցումները կատարվել են 1041 թ. (ԿԲ. 340)։*

Հրատ. *Ջալալյանց, 160։ Ալիշան, 134։* ՄԱԿ, *110—111։ Լալայան, Ազգ. հանդ.* XXVI, *24։*

Լուսանկ. 175

***456. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ** արևմտյան մուտքի ճակատաքարին (գավթի մեջ( արտաքուստ, 7 տող.*



ՆՂ: ⸢Ե⸣Ի :Ժ: (1051) ԿԱՄ ԵՂԵԻ ԻՆՁ, ՀԱՅՐ ՎԱՐԴԿԱ ԵՒ ՍԲ.| ԵՂԲԱՐԱՑՍ ԳՐԵԼ ԶՑԻՇԱՏԱԿՍ ՎԱՍՆ ՎԱՐԳԱ, ԶԱՔԱ|ՐԷԻ ՍՐԴՈ, ՈՐ ՄԵԾ ՑՈՒՍՈՎ ԵՐԵՏ ԶԲՎԵԱ ՄԱՐԳ ԵՒ ՍԵԴԱ|Ի ԱՅԳԻ⸢Ն ԵՒ ԱՅԼ ՇԱ⸣Տ ԻՐՔ. ԵՒ ՄԵՔ ԳՐԵՑԱՔ ՈՐՁԱՓ Ի ՀԱՍՏԱՏՈՒ⸢ԹԵԱ⸣Ն Է ԵԿԵ⸢Ղ⸣Ե⸢ՑԻՍ⸣ ԶՎԱՐԳԱՎԱՌԻՆ ՇԱԲԱԹՆ :ԺԵ: ԱԻՐ ԺԱՄ.| ՈՐ ԽԱՓԱ⸢ՆԷ :Ց⸣ԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԱԾ Է ԵՒ ՆՈՐԱ ՄԵՂԱՑՆ ⸢ՏԷՐ⸣ Է:

Ծանոթ. *Թվականի գրությամն այս ձևը ՝ ՆՂ՝ և ՝Ժ՝ փոխանակ ՝Շ՝, թեև հազվադեպ, բայց անսովոր չէ։ Այս երևույթը պատճառ է դարձել, որ հրատարակիչները ՝ՇԺ՝ և ՝ԶԺ՝ են վերծանել։*

*Հրատ. Ջալալանց, 160։ Ալիշան, 154—155։* MAK, *109։*
*Լալայան, Ազգ. հանդ.* XXVI, *24։*

***457. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱՎԹԻ** հարավային պատի վրա, ներքուստ, 7 տող.*



ՑԱՆՈՒՆ ԱՑ. ԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ ԶԻՄ ԵՂԵԳԵՑ ՀԱՅՐԷՆԻ ՀՈՂՆ՝ ԶՓՈՐԱՏԱՊՆ ԻՆՁ ԿԱ՝ ՈՒ ՄԵՌԱՆԷԻ՝ ՑԱՂԱՑ ՔԱՐԻ ՍԲ. ՅՈՎԱՆԷՍ ՏՈՒԻ, ԻՄ ՀԱՐԷՆԱԴԱՐՁԱՆՑ ԷՐ, ՈՐ ԻՄ ՄԱՀՈՒՆ ՑԷՏ ԵՒ ՑԱՂԱՑ ՔԱՐԱ ԵԼՆԵՐ ՈՒ ՈՋ ՈՒՄ ՈՁԻՆՁ ՀԱՇԻՒ

ՋԿԱ ՀԵՏ ՀՈՂԻՆ. ՈՎ ՈՐ ԶԻՄ ԱՆԴԱՐՁՆ ՑԵՏ ԴԱՐՁ[ՈՒ]ՑԱՆԷ :Ց[ԾԸ]Ը: ՀԱՑՐ[ԱՊ]Ա-ՊԵՏԱՑ ՆԶՈՎԱԾ Ե:

*Ծանոթ. Վերջին տողը շարունակված է մուտքի կամարի վրա։*

*Հրատ. Ջալալեանց, 160։ Ալիշան, 153. Ղալաեան, Ազգ. Հանդ. XXVI. 24։*

Լուսանկ. 176

***458. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱՎԹԻ*** *հարավային պատին, նախորդի տակ, ներքուստ, 9 տող.*



ՑԱՆՈՒՆ ԱՑ. ԵՍ ԴՈՐԳ, ԴԵՂԻՆ ՈՐԴԻ [ԻՄ]| ՄՐՏԻ ՑՈՒԺԱՐՈՒԹԲ. ՏՎԻ ԶԻՄ ԻԳԻՆ ԶԿԱ[ԹՈՂ]ԻԿԷ[Ի]Ն ԱԾԱԾԻՆԻՆ. ԵՍ ԷՏՎԻ ՍԲ · · · |Ո ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԲ ՍԲ. ԵՂ[ԲԱՐՔ] ԿԱՄԱԿ[Ի]Ց ԵՂԵՆ. ԵՍ| ՏՎԻ ՎԱՍՆ ԾՈՎ ԱՑԵԱԼ ՄԵՂ[ԱՑ] ԹԵՐԵ[Ւ]Ս ՈՂՈՐՄՈՒԹԻ ԳՏԻՑ ԵՍ. ԶԱՄՈՒՍՆԻՆ · · · ԺԱՄ ԱՌՆԵՆ ԵՆ. ՈՎ ԱՑՍ ԲԱՆԻՍ ՀԱԿԱՌ[Ա]ԿԱ :ՑԺԸ: ՀԱՑՐԱՊԵՏ|ԱՑ ՆԶՈՎԱԾ Է:

*Ծանոթ. Գծագրության մեջ վերջին վեց տողերի շարունակությունները գրված են մուտքի կամարի վրա և լավ են պահպանվել։*

*Գրել է նախորդի գրիչը. երկու արձանագրություններն էլ գրչության ոճով XII դարին են պատկանում։*

Լուսանկ. 176

***459. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ*** *վերին հարկի հարավային խորշի տակի քարի վրա, արտաքուստ, 4 տող.*



ԶՄԵՂՈՒՑԵԱԼ ՍԷԹ[Ո]Ս Ց|ԱՂԱԻԹՍ ՑԻ|ՇԵՔ ԵՒ ԱԾ. ԶՁԵՁ| ՑԻՇԷ:

Լուսանկ. 177

***460.*** ***Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱՎԹԻ հարավային պատին, ներքուստ, 1 տող.***

ԶՍամունայ յիշեցէք ի Քրիստոս.

Ծանոթ. *Այս արձանագրությունը վրիպել է մեր աչքից. կասկածելի ենք համարում ՍԱՄՈՒՆԱՅ անունը։*

*Հրատ. Ջալալեանց, 160։ Ալիշան, 155։*

***461.*** ***ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, գտնվում է Ս. Հովհաննեսի արևմըտյան պատի տակ՝ կողքերի շրջանակներին և տակին.***




ԹՎ. :ՁԻԲ:

Ծանոթ. *Մնացած մասերն անորոշ են, ըստ երևույթին պետք է լինի. ՈՐ ԵՐԿՐՊԱԳԱՆԷՔ. ապա վերջին բառը՝ ՀԱՅՐԱՊԵՏ։*

Լուսանկ. 178

***462.*** ***ԽԱՉՔԱՐԻ պատվանդան, տեղահան է եղել, խաչքարն էլ չկա. գըտնըվում է ս. Կարապետի հարավ-արևելյան անկյունի մոտ, 5 տող.***



ԱՅՍ ԱՐՁԱՆ ԱՒԾԵԱ|Լ ԱՐԵԱՄԲ
ԱՐԱՐՉԻՆ. ՈՐՔ ԵՐԿ|ՐՊԱԳԱՆԵՔ
ՄԲ. ՆՇ|ԱՆ|ԻՍ, ՁԴԱՒԼԱԹ Ի
ՅԱՂԱՒ|ԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

## 25. ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂ ԵՎ ՇԱՏԻՎԱՆՔ

*Այս գյուղի անունը հնուց ավանդված չէ, այժմ էլ գյուղի մեջ հին հուշարձաններ չկան։ Եղեգիս գետի և ժայռերի արանքում գտնվող այդ նեղ ու սահմանափակ տարածության վրա, ուր այժմ Շատին գյուղն է տեղավորված՝ հնում եղել են երկու այլ գյուղեր՝ Ոստինք և Անգեղի, որոնց միայն ավերակներն են մնացել։ Դրանցից առաջինը գտնվում է Շատինից հյուսիս, մոտ չորս կիլոմետր հեռու և երկրորդը հարավ՝ $1^1/_2$ կիլոմետր հեռու։*

*Շատին գյուղի սահմաններում, սակայն, պահպանվել են պատմական հետևյալ հուշարձանները, որտեղ նաև արձանագրություններ կան.*